ԹԻՎ 33 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«01» հոկտեմբերի 2025թ.
ք.Արթիկ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N38

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՄԱՆԴԱՏԸ «ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՋՈՐԴ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի «25»-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու առաջին նստաշրջանի ընթացքում ավագանու նիստերի, քվեարկությունների և հանձնաժողովի նիստերի կեսից ավելիին անհարգելի պատճառով բացակայած ավագանու անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի N91-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 123-Ա որոշումը, ««Ազգ-Համայնք» կուսակցությունների դաշինքի Անի համայնքի ավագանու թվով 5/հինգ/ և «Իմ հզոր համայնք» կուսակցության Անի համայնքի ավագանու 1/մեկ/ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին» Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի «29»-ի N3 արձանագրությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասով՝ թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Մ Է

Անի համայնքի ավագանու «Ազգ-Համայնք» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվում է «Ազգ-Համայնք» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Զոհրաբ Ռուստամի Դավթյանին:

Հանձնաժողովի նախագահ՝ Արկադի Թադևոսյան

Նախագահի տեղակալ՝ Արթուր Նաջարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիաննա Գրիգորյան

Անդամներ՝ Գոռ Պետրոսյան

Ռուզաննա Թորոսյան

Անի Թորոսյան

Տանյա Համբարյան